

«ՀԱՅ ԳԻՐՔ» ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՎԻՃԱԿԸ
Անի Սևանյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դարեր ի վեր հասարակության հոգևոր գործունեության պահպանման և փոխանցման պատասխանատու գործը կատարում էր և շարունակում է կատարել բանասիրությունը: Սակայն բանասիրությունն իր առաջադրանքը չի կարող կատարել առանց տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների, որոնք պատմականորեն անընդհատ փոփոխության են ենթարկվում:

Կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացման կարևորագույն հիմքերը հետևյալներն են՝ լեզվի առաջացումը, գրի ստեղծումը, գրատպության հայտնագործումը և վերջապես թվային հեղափոխությունը: Մինչգրային ժամանակաշրջանում գիտելիքի պահպանման և փոխանցման հիմնական մեթոդը մտապահումն ու ասմունքի միջոցով փոխանցումն էր: Գրի զարգացման արդյունքում պահպանման և փոխանցման դերն ընկավ տեքստի ուսերին, ինչն էլ արձանագրվեց ավելի կայուն նյութերի՝ քարի, փայտի, կաշվի, պապիրուսի, մետաքսի, թղթի վրա, որոնք ավելի հուսալի էին, քան բանավոր խոսքը: Սակայն սրանք էլ իրենց թանկությամբ և հազվադեպությամբ, ինչ-որ չափով խոչընդոտում էին տեղեկատվության տարածմանը:

XV դարում գրատպության հայտնագործումը տեղեկատվական հեղափոխություն առաջացրեց: Գրքերը դարձան ավելի մատչելի և բազմազան ու բազմաժանր: Կրթության հիմնական միջոցը դարձավ կարդալը, և ոչ թե լսելը: Տպագիր գրքերի արագ տարածումը հասանելի դարձրեց ժամանակի մտավոր ներուժն ու բացառիկ մտքերը: Տեղեկատվական հաջորդ հեղափոխությունը, որն ավելի արմատական էր, թվայինն էր, տեղի ունեցավ XX դարում և շարունակվում է մինչ օրս: Բոլորս քաջ գիտակցում ենք, որ թվային «հեղափոխությունը» բազմաթիվ դրսևորումներ ունի: Թվայնացման տեխնոլոգիաներն ազդում են հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա:

Տեխնոլոգիական նոր միջոցների ներգործությունը հասարակության վրա ավելի ծանրակշիռ է, քան էլեկտրոնային միջոցների՝ մի քանի տասնամյակ առաջ ունեցած դերակատարումը: Տեխնոլոգիական նոր միջոցների շնորհիվ մենք ցանկացած վայրում, ժամին և եղանակով ստանում և սպառում ենք ցանկացած տեղեկատվական

նյութ: Համակարգիչը դուրս բերեց տեքստը նյութի սահմաններից, իսկ համացանցն ու էլեկտրոնային հաղորդակցման միջոցները հանեցին տեղեկատվության վրա դրված տարածքային սահմանափակումները: Նոր թվային տեխնոլոգիաները դարձան գիտելիքի և տեղեկատվության գոյության նոր ձև:

Հայերն առաջիններից էին, որ օգտվեցին Գուտենբերգի գյուտից և 1512 թ.-ից սկսած աշխարհի տարբեր ծագերում, որտեղ կային հայկական գաղթավայրեր, հիմնադրեցին հայկական տպարաններ և լույս ընծայեցին հայերեն գրքեր: Ցավոք, թվային տեխնոլոգիաների կիրառման բնագավառում առաջիններից չէինք, սակայն շնորհիվ բնագավառի հայ գիտականների՝ փորձում ենք հասնել առաջատարներին:

Այսպիսով Հայաստանի ազգային գրադարանը ձեռնարկել է «Հայ գիրք» համահավաք էլեկտրոնային շտեմարանի ձևավորումը, որում ամփոփված կլինեն աշխարհի տարբեր երկրներում 1512 թ.-ից մինչև մեր օրերը տպագրված հայերեն, նաև հայատառ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքերը, ինչպես նաև հայատառ թուրքերեն գրքերը: Շտեմարանը կդառնա հայերեն գրքերի և հայ տպագրական արվեստի էլեկտրոնային հանրագիտարան:

Հայկական գրատպության սկզբնավորումից հետո աշխարհի տարբեր ծագերում շարունակաբար հրատարակվել և այսօր էլ հրատարակվում են հայ գրքի մատենագիտական ցանկեր: Ազգային գրադարանում վերջին 30 տարիներին հրատարակվել են «Հայ գիրքը 1512-1800 թթ.», «Հայ գիրքը 1801-1850 թթ.», «Հայ գիրքը 1851-1900 թթ.», «Հայ գիրքը 1901-1920 թթ.», «Հայ գիրքը 1921-1930 թթ.» կոթողային աշխատանքները, որոնք պարարտ հիմք են նմանատիպ հսկայածավալ և պատասխանատու աշխատանքի իրականացման համար:

Բազմակողմանի և լիարժեք շտեմարան ստեղծելու համար մեր գրադարանում աշխատանքներ են կատարվում հետևյալ ուղղություններով.

1. Հայ գրքի մատենագիտական շտեմարանի ստեղծում:
2. Հայ գրքի լրիվ տեքստային շտեմարանների ձևավորում:
3. Բազմալեզու հեղինակավոր գրառումների շտեմարանի ստեղծում:
4. Առարկայական խորագրերի հնգալեզու, այն է՝ (հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն) շտեմարանի ստեղծում:
5. Մատենագիտական գրառման միացում համապատասխանող գրքի թվային պատճենին:

6. Հեղինակավոր գրառումների միացում հայերեն Վիքիպեդիայում իրեն համապատասխանող մուտքին:

7. Մատենագիտական գրառման կապում «Ամագոն» էլեկտրոնային գրավաճառ ցանցի համապատասխան մուտքի հետ (եթե նման գիրք կա Ամագոնում) կամ պարզապես մուտքագրողի կողմից գրքի տեսքի կցում մատենագիտական գրառմանը:

Հայ գրքի մատենագիտական շտեմարանը ձևավորվում է Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի և հայ տպագիր գրքի՝ վերը նշված հատորներից կազմված մատենագիտությունների հիման վրա: Որպես ծրագրային միջավայր ընտրվել է «Կոհա» համակարգը, որը նախագծված է գրադարանային գործընթացների ավտոմատացման համար և լայն տարածում ունի ողջ աշխարհում: Համակարգը համատեղելի է գրադարանագիտության և տեղեկատվական գիտության բնագավառներում ընդունված և գործող միջազգային չափորոշիչների հետ, աշխատում է բազմալեզու միջավայրում, ունի հեղինակավոր գրառումների և թեմատիկ խորագրերի ստեղծման մոդուլ, ինչպես նաև նախագծողների և շահագործողների ակտիվ լսարան, և պատկանում է «Բաց կոդերով ծրագրերի» ընտանիքին: Շնորհիվ օգտագործված մեքենաընթեռնելի MARC21 ստանդարտի էլեկտրոնային համահավաք քարտարանում առկա հայերեն գրքերի մատենագիտական նկարագրությունները տեղափոխվել են «Հայ գրքի» շտեմարան և խմբագրվում ու վերալրացվում են Հայաստանի ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի աշխատակիցների կողմից: Արդեն լիովին խմբագրվել են 1512-1800 թթ. լույս ընծայված գրքերի մատենագիտական նկարագրությունները, կցվել են թվային տարբերակները, եթե իհարկե այդպիսիք առկա են, տեղադրվել է գրքի տեսքը: Ակտիվ աշխատանքներ են տարվում մյուս ժամանակաշրջանների գրքերի նկարագրությունների վրա: Թվայնացվում են 1801-1850 թթ. լույս ընծայված և մեզ հասանելի գրքերը: Շտեմարանում նկարագրված են նաև հմայիլները և հնատիպ օրացույցները. վերջիններս նկարագրված են գրքերի ձևաչափով: Մատենագիտական նկարագրություն ունեն նաև հայերեն հատվածներ և այբուբեն պարունակող այլալեզու գրքերը: Այդ նկարագրություններին, որպես թվային պատճեն , կցված են միայն հայերեն հատվածները: Մուտքագրվում և մատենագիտական

նկարագրություն են ստանում նաև նոր հրատարակվող գրքերը և կատալոգները: «Հայ գիրք» համահավաք շտեմարանում վերջին 9 ամիսներին ստեղծվել և խմբագրվել է 7125 գրքի մատենագիտական գրառում, որից 3310 մատենագիտական գրառմանը կցված են գրքի արտաքին տեսքը և թվային պատճենը: Շտեմարանում կա ավելի քան 13114 հեղինակավոր գրառում, այն է՝ անձանց անուններ, կազմակերպության անվանումներ, թեմատիկ առարկայական և աշխարհագրական անվանումներ, ինչպես նաև միասնական անվանումներ:

Բազմալեզու հեղինակավոր գրառումների առկայությունը հնարավորություն է տալիս մատենագիտական շտեմարաններում, ըստ հեղինակի որոնումներ կատարելիս, անկախ այն իրողությունից, թե մատենագիտական շտեմարանում ինչպես է մուտք արված հեղինակը (հայերեն, լատինատառ, կիրիլիցա, կեղծանունով) այդ անվան բոլոր տարբերակներով գրառումների համախմբված հայտնաբերման և արտածման: Հայ գրադարանային իրականության մեջ այս շտեմարանը աննախադեպ երևույթ է. նման շտեմարանի առկայությունը օգտակար կլինի նաև գիտության, մշակույթի բնագավառների համար: Այսպիսով հեղինակավոր գրառումները «Հայ գրքի» շտեմարանի բաղկացուցիչ մասն են կազմում և շտեմարանից օգտվողի համար առավել դյուրին ու մատչելի են դարձնում մատենագիտական նյութի փնտրումը:

Հրատարակված նյութերում, ելնելով հրատարակման տեղից, ժամանակաշրջանից կամ այլ հանգամանքներից, միննույն անուններն ու անվանումները կարող են հանդես գալ մի շարք տարբերակներով կամ տարբերակներով: Օրինակ՝

Նույն կազմակերպության անունը՝ Հայաստանի ազգային գրադարան, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն Հայաստանի ազգային գրադարան, Ալ. Մյասնիկյանի անվան ժողովուրդների բարեկամության շքանշանակիր պետական գրադարան, Ալ. Մյասնիկյանի անվան ՀԽՍՀ պետական գրադարան, Հայկական ՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարան, Национальная библиотека Армении, National library of Armenia և այլն:

Նույն հեղինակի անունը՝ Հրաչյա Աճառյան, Հ.Հ. Աճառյան, Հրաչեայ Յակոբի Աճառյան, Հրաչեայ Յ. Աճառեան, Աճ., Հր., Արտավազդ, Hrachia Acharyan, Рачия Акопович Ачарян և այլն:

Նույն տեղանունը՝ Լենինական, Ալեքսանդրապոլ, Ալեքպոլ, Ալեքսանդրոփոլ, Գիւմրի, Գյումրի, Կումայրի և այլն:

Նույն թեմատիկ անունը՝ լեզվաբանություն, լեզուաբանություն, языкознание, linguistics և այլն:

Էլեկտրոնային քարտարանում որոնում կատարելիս օգտվողը բնականաբար նշում է անվան կամ անվանման այն տարբերակը (օրինակ՝ Հրաչյա Աճառյան), ինչ հայտնի է իրեն: Արդյունքում Էկրանին արտածվում են միայն այն գրառումները, որոնք ունեն այդ անունը կամ անվանումը (Հրաչյա Աճառյան) պարունակող դաշտեր: Մինչդեռ կան բազմաթիվ այլ գրառումներ՝ այդ նույն անվան ձևային կամ տարբերակային այլ դրսևորումներով, որոնք չեն արտածվի փնտրման արդյունքում: Էլեկտրոնային շտեմարանից օգտվելիս, այդ անվան հեղինակավոր գրառման առկայության դեպքում (եթե մատենագիտական գրառումներում մուտքագրողն օգտվել է դրանից), անկախ այն հանգամանքից, թե որոնման համար դրա որ տարբերակն է ընտրվել, գրացուցակային շտեմարանում առկա այդ անվան բոլոր տարբերակներով գրառումները համախմբված կարտածվեն:

Միով բանիվ, հեղինակավոր գրառումների շնորհիվ միևնույն անունների և անվանումների բոլոր տարբերակները համակարգվում են մեկ՝ առավել հայտնի անվան կամ անվանման խմբի մեջ, և դրանք պարունակող բոլոր գրառումները փնտրման ժամանակ համահավաք տեսքով արտածվում են Էկրանին:

Հեղինակավոր գրառում հասկացության մեջ «հեղինակավոր» բառն արդեն իսկ խոսում է այն մեծ պատասխանատվության մասին, որը պետք է կրի այդ գրառումը ստեղծողը: Կոչված լինելով դառնալ մատենագիտական գրառման տեղեկատվական աղբյուր՝ «հեղինակավոր», հավաստի աղբյուրների հիման վրա: Դրանց մեջ առաջնահերթությունը տրվում է տպագիր նյութերին՝ հանրագիտարաններին, բառարաններին, մատենագիտական ցանկերին, գրքերին, պարբերականներին, մամուլին և այլն: Թվային տեխնոլոգիաների զարգացման արդյունքում նման աղբյուր կարող են դառնալ նաև ինտերնետային որակյալ կայքերը, աշխարհի խոշոր գրադարանների էլեկտրոնային շտեմարանները:

Թվային գրադարանի շրջանակներում աշխարհի տարբեր երկրներում ընդունված են Հեղինակավոր գրառումների տարբեր չափորոշիչներ, որոնք առաջարկում են

դրանց տեսակների և կազմման տարբեր մեթոդներ: Ըստ տեղեկատվության բովանդակային ուղղվածության կարելի է առանձնացնել կիրառությամբ առավել տարածում գտած Հեղինակավոր գրառումների հետևյալ տեսակները.

- Անձանց անունների կամ անձնանունային
- Կազմակերպությունների անունների
- Միջոցառումների անունների
- Թեմատիկ առարկայական եզրերի
- Աշխարհագրական անվանումների
- Միասնական վերնագրերի
- Մեր գրադարանում առայժմ աշխատանքներ են տարվում անձնանունային

հեղինակավոր գրառումների, միասնական վերնագրերի, կազմակերպությունների անունների և թեմատիկ առարկայական գրառումների ստեղծման ուղղությամբ:

Անձնանունային հեղինակավոր գրառումները համակարգում են ինչպես տպագիր նյութի ցանկացած հեղինակի, այնպես էլ ճանաչված հայտնի դարձած, նշանավոր, անձանց անունները՝ լինեն դրանք գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, պետական, քաղաքական գործիչներ, մարզիկներ կամ հասարակական ճանաչում ձեռք բերած այլ անձինք:

Հարկ է նշել, հայ անձնանունների տարրնթերցումային և տարբերակային դրսևորումները տպագիր նյութերում մեծ քանակ են կազմում: Պատճառը թերևս ուղղագրական-ուղղախոսական բնագավառի բազմաշերտությունն է՝ կապված թե՛ լեզվի զարգացման պատմական փուլերի, թե՛ գրական հայերենի երկու ճյուղերի՝ արևմտահայերենի և արևելահայերենի, թե՛ սփյուռքահայության՝ դեռևս ոչ մի չափորոշիչով չկանոնարկված գրավոր խոսքի հետ: Եթե սրանց ավելացնենք նաև անձնանունների համակարգում տեղ գտած կեղծանունները, ապա դրանց տարբերակային բազմազանության պատկերն ավելի ամբողջական կդառնա:

Անձանց անունների նման բազմազանությունը բարդություններ է առաջացնում էլեկտրոնային գրացուցակում որոնում կատարելիս:

Մատենագիտական գրացուցակում մուտքագրողը պարտավոր է ճշտորեն պահպանել իր ձեռքի տակ եղած տպագիր նյութի տվյալները: Ասենք, եթե նա մուտքագրում է «Յովազաձորի գերիները» (1959) գիրքը, որի տիտղոսաթերթին նշված է հեղինակը՝ Ա-

նանեան Վախտանք: Նա պարտավոր է գրառման հիմնական դաշտում (100#) հեղինակի անունը գրանցել այնպես, ինչպես տրված է հրատարակության մեջ: Մինչդեռ շտեմարանից օգտվելը, փնտրում կատարելիս, սովորաբար հարցումը ձևակերպում է այդ հեղինակի անվան իրեն հայտնի տարբերակով՝ *Անանյան Վախթանգ*: Փնտրման արդյունքում արտածվում են միայն այն գրառումները, որոնք ունեն *Անանյան Վախթանգ* (100#) հիմնական դաշտեր և վերը նշված հրատարակությունը չի երևում «Յովագաձորի գերիները»: Մինչդեռ եթե կա հեղինակի Անձնանունային գրառումը, ապա նրա անվան յուրաքանչյուր տարբերակումը կամ նույնիսկ մամուլում օգտագործված նրա յուրաքանչյուր ծածկանունը մատնացույց է անում առավել ընդունված ձևին, որն է՝ *Անանյան Վախթանգ*:

Նույնը կարելի է ասել հեղինակի տարբեր լեզուներով հրատարակությունների համար: Որոշ մուտքագրողների մտահոգությունը, թե դա նշանակում է բնագրին հարազատ չմնալ, քանի որ ռուսերեն կամ այլ օտարալեզու հրատարակության բնագրային լեզուն այս դեպքում չի պահպանվում, արդարացված չէ: Աշխարհում ընդունված միտում է՝ գրադարանային շտեմարանները կազմել տվյալ երկրի ազգային լեզվով: Իսկ ինչ վերաբերում է բնագրի լեզվական տարբերակին՝ ընթերցողն ամեն դեպքում կտեսնի այն՝ արտածված մատենագիտական գրառման 245 դաշտում:

«Հայ գիրք» շտեմարանում ձևավորվող անձնանունային հեղինակավոր գրառումները շարունակաբար հարստանում են հայազգի հեղինակների մասին տվյալներով, ինչը կարող է տեղեկատվական արժեք ունենալ նաև աշխարհի այլ գրադարանների և հայազգիտական կենտրոնների համար: Գրառումները վերաբերում են ոչ միայն հայ մշակույթի, գրականության և գիտության ներկայացուցիչներին, այլև օտար հեղինակներին: Թեմատիկ խորագրերը վերաբերում են պատմության, գրականության, բժշկության, երաժշտության, արվեստի, հոգեբանության, կրոնի, փիլիսոփայության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, լեզվաբանության բնագավառներին: Հեղինակավոր գրառումները վերաբերում են ոչ միայն հայ մշակույթի, գրականության և գիտության ներկայացուցիչներին, այլև օտար հեղինակներին: Հայ գրադարանային իրականության մեջ այս շտեմարանը աննախադեպ երևույթ է. նման շտեմարանի առկայությունը օգտակար կլինի նաև գիտության, մշակույթի բնագավառների համար:

Շտեմարանը հասանելի է haygirk.nla.am կայքում: